

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

Համատեղ ֆիլմարտադրության մասին

Անկախ պետությունների համագործակցության մասնակից պետությունների Կառավարությունները, այսուհետ՝ Կողմեր,
հիմնվելով Անկախ պետությունների համագործակցության մասնակից պետությունների հունանիտար համագործակցության մասին 2005 թ. օգոստոսի 26-ի համաձայնագրի և Կինեմատոգրաֆիայի բնագավառում համագործակցության մասին 1995 թ. փետրվարի 10-ի համաձայնագրի վրա,
ձգտելով աջակցել տեսալսողական ոլորտում համագործակցության զարգացմանը,
հաշվի առնելով այն ներդրումը, որ համատեղ ֆիլմարտադրությունն ունի կինեմատոգրաֆիայի զարգացման, ինչպես նաև պետությունների միջև տնտեսական և մշակութային կապերի ամրապնդման գործում,
հաստատելով իրենց մտադրությունը՝ ամեն կերպ աջակցելու յուրաքանչյուր Կողմի պետությունում ֆիլմերի արտադրությանն ու օգտագործմանը՝ իրենց օրենսդրությանը և միջազգային պարտավորություններին համապատասխան,

համաձայնեցին ներքոհիշյալի մասին.

ՀՈՂՎԱՏ 1

Սույն Համաձայնագրի նպատակների համար ստորև բերվող տերմինները նշանակում են.
«Ֆիլմ» - ստեղծագործական մտահղացման հիմքի վրա գեղարվեստական, փաստավավերագրական, գիտահանրամատչելի, կրթական, անիմացիոն, հեռուստատեսային կամ այլ ձևով ստեղծված տեսալսողական ստեղծագործություն, որը բաղկացած է կինոժապավենի կամ այլ տեսակի կրիչների վրա ամրագրված, թեմատիկ ամբողջականության մեջ միավորված, հետևողականորեն իրար հետ կապված կադրերից և նախատեսված է ընկալման համար համապատասխան տեխնիկական սարքավորումների միջոցով,
«արտոդյուսեր» - Կողմի պետության քաղաքացի կամ Կողմերի պետությունների օրենսդրությանը համապատասխան ստեղծված իրավաբանական անձ, որը պատասխանատու է ֆիլմի ֆինանսավորման, արտադրության և կամ օգտագործման համար,
«համապրոդյուսերներ» - պրոդյուսերներ, որոնք կապված են ֆիլմի համատեղ արտադրության և կամ օգտագործման մասին պայմանագրով, ներառյալ՝ մասնակցությունը դրա ֆինանսավորմանը,
«համատեղ արտադրության ֆիլմ» - ֆիլմ, որի արտադրությունն իրականացնում են երկու և ավելի Կողմերի համապրոդյուսերներ,
«ազգային ֆիլմ» - համատեղ արտադրության ֆիլմ, որի հանդեպ կիրառվում են ազգային կինոյին ցուցաբերվող պետական աջակցության բոլոր ձևերը՝ Կողմերից զոնե մեկի պետության օրենսդրությանը համապատասխան:

ՀՈՂՎԱՏ 2

«Ազգային ֆիլմ»-ի կարգավիճակ ստանալու կարգը և պայմանները հաստատվում են համատեղ արտադրության ֆիլմերին «ազգային ֆիլմ»-ի կարգավիճակ տալու մասին Կանոնակարգով, որը կազմում է սույն Համաձայնագրի մտահղացման մասը (այսուհետ՝ Կանոնակարգ): Կողմերի իրավասու մարմիններն իրավունք ունեն որոշել համատեղ արտադրության ֆիլմերին ցուցաբերվող պետական աջակցության ձևը և ծավալը կինեմատոգրաֆիայի ոլորտում ազգային օրենսդրության ընդունման և կամ լրամշակման ժամանակ:

ՀՈՂՎԱՏ 3

Համատեղ արտադրության ֆիլմերին «ազգային ֆիլմ»-ի կարգավիճակ տալու մասին որոշումը յուրաքանչյուր առանձին դեպքում ընդունում են Կողմերի իրավասու մարմինները:

ՀՈՂՎԱՏ 4

Կողմերից մեկի իրավասու մարմինների՝ համատեղ արտադրության ֆիլմերին «ազգային ֆիլմ»-ի կարգավիճակ տալու մասին որոշումը կարող է չեղյալ հայտարարվել նրանց կողմից, եթե ֆիլմը դադարում է համապատասխանել Կանոնակարգի պայմաններին:

ՀՈՂՎԱՏ 5

Կողմերն աջակցություն են ցուցաբերում գեղարվեստական-արտադրական անձնակազմի՝ իրենց տարածք մուտք գործելուն և այնտեղից մեկնելուն, ինչպես նաև համատեղ արտադրության ֆիլմերի ստեղծման համար անհրաժեշտ սարքավորումների և նյութերի ժամանակակից ներկրմանն ու արտահանմանը՝ Կողմերի պետությունների օրենսդրությանը համապատասխան:

ՀՈՂՎԱՏ 6

Համատեղ արտադրության ֆիլմերի մակագրություններում, ինչպես նաև գովազդային արտադրանքում ընկնում են ֆիլմերի համատեղ արտադրությանը մասնակցած Կողմերի պետությունները:

ՀՈՂՎԱՏ 7

Համատեղ արտադրության ֆիլմերի օգտագործումն ու տարածումը ենթակա չեն որևէ սահմանափակումների, բացառությամբ Կողմերի պետությունների օրենսդրությամբ նախատեսված դեպքերի:

ՀՈՂՎԱՏ 8

Համատեղ արտադրության ֆիլմերին «ազգային ֆիլմի» կարգավիճակ տալը չի պարտավորեցնում Կողմի պետությանն իր տարածքում այդ ֆիլմերի ցուցադրման թույլտվություն տալ:

ՀՈՂՎԱՏ 9

Սույն Համաձայնագրի կիրառման և մեկնաբանման ընթացքում ծագող վիճելի հարցերը լուծվում են շահագրգիռ Կողմերի միջև խորհրդակցությունների և բանակցությունների կամ Կողմերի կողմից համաձայնեցված այլ ընթացակարգի միջոցով:

ՀՈՂՎԱՏ 10

Սույն Համաձայնագիրը ժամանակավորապես կիրառվում է ստորագրման օրվանից և ուժի մեջ է մտնում այն ստորագրած Կողմերի կողմից դրա ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերի կատարման մասին երրորդ ժամուցումն ավանդապահի ստանալու օրվանից 30 օր լրանալուց հետո:

Ներպետական ընթացակարգերն ավելի ուշ կատարած Կողմերի համար, սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում համապատասխան փաստաթղթերն ավանդապահի ստանալու օրվանից 30 օր լրանալուց հետո:

ՀՈՂՎԱՏ 11

Կողմերի փոխադարձ համաձայնությամբ սույն Համաձայնագրում կարող են կատարվել փոփոխություններ և լրացումներ, որոնք ձևակերպվում են համապատասխան արձանագրությամբ:

ՀՈՂՎԱՏ 12

Սույն Համաձայնագիրն ուժի մեջ մտնելուց հետո բաց է Անկախ պետությունների համագործակցության՝ սույն Համաձայնագրի դրույթները կիսող և դրանից բխող պարտավորություններն ընդունող մասնակից պետությունների միանալու համար: Միացող պետության համար Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում միանալու մասին փաստաթղթերն ավանդապահի ստանալու օրվանից 30 օր լրանալուց հետո:

ՀՈՂՎԱՏ 13

Սույն Համաձայնագիրը գործում է ուժի մեջ մտնելու օրվանից 5 տարվա ընթացքում: Ժամկետը լրանալուց հետո Համաձայնագրի գործողությունն ամեն անգամ ինքնաբերաբար երկարաձգվում է հաջորդ

հնգամյա ժամանակաշրջանների համար, եթե Կողմերն այլ որոշում չընդունեն:

ՀՈՂԱՆՏ 14

Կողմերից յուրաքանչյուրը կարող է դուրս գալ սույն Համաձայնագրից՝ դուրս գալուց առնվազն 6 ամիս առաջ ավանդապահին գրավոր ծանուցում ուղարկելով:

Կատարված է Քիչնև քաղաքում 2008 թվականի նոյեմբերի 14-ին մեկ բնօրինակով, ռուսերեն: Բնօրինակը պահվում է Անկախ պետությունների համագործակցության գործադիր կոմիտեում, որը սույն Համաձայնագիրը ստորագրած յուրաքանչյուր պետության կուլտարի դրա վավերացված պատճենը:

*Հավելված Համատեղ ֆիլմարտադրության մասին
2008 թ. նոյեմբերի 14-ի համաձայնագրին կից*

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

համատեղ արտադրության ֆիլմերին «ազգային ֆիլմ»-ի կարգավիճակ տալու մասին

Սույն Կանոնակարգը նախատեսում է համատեղ արտադրության ֆիլմերին «ազգային ֆիլմ»-ի կարգավիճակ տալու կարգը և պայմանները:

1. Համատեղ արտադրության ֆիլմերին «ազգային ֆիլմ»-ի կարգավիճակ տալու համար պրոդյուսերը /համապրոդյուսերները/ Կողմերից յուրաքանչյուրի իրավասու մարմիններին համապատասխան հայտ են ներկայացնում: Այդպիսի հայտ կարող է ներկայացվել ինչպես ֆիլմի արտադրությունը սկսելուց առաջ, այնպես էլ դրա ընթացքում, բայց պրոդյուսերների /համապրոդյուսերների/ միջև փոխադարձ վճարումների ժամկետի ավարտից ոչ ուշ:

Հայտին կցվում են հետևյալ փաստաթղթերը:

1.1. Ֆիլմի գրական սցենարը կամ ընդհանուր տեսությունը, որոնք պատրաստվել են Կողմերից յուրաքանչյուրի օրենսդրության պահանջներին համապատասխան:

1.2. Ֆիլմում օգտագործվող ստեղծագործությունների նկատմամբ հեղինակային իրավունքների փաստաթղթային հաստատումը:

1.3. Գեղարվեստական-արտադրական անձնակազմի /այսուհետ՝ ԳԱԱ/ ցուցակը, որտեղ նշվում է քաղաքացիությունը և կատարվող աշխատանքի տեսակը, գլխավոր դերակատարների ցուցակը, որտեղ նշվում է նրանց քաղաքացիությունը: ԳԱԱ-ի անդամներ համարվում են այն անձինք, որոնք Կողմերից յուրաքանչյուրի պետության օրենսդրության ճանաչվում են որպես այդպիսին:

1.4. Ֆիլմի արտադրության օրացուցային ներկայացման ծրագիրը:

1.5. Ֆիլմի ռեժիսորի և սցենարի հեղինակի հետ գործող պայմանագիրը:

1.6. Իրավաբանական անձ հանդիսացող պրոդյուսերների /համապրոդյուսերների/ հիմնարար փաստաթղթերը:

1.7. Ֆիլմի արտադրության բիզնես պլանը:

1.8. Պրոդյուսերների /համապրոդյուսերների/ միջև համատեղ ֆիլմարտադրության պայմանագրի նախագիծը կամ գործող պայմանագիրը:

2. Պրոդյուսերների /համապրոդյուսերների/ միջև պայմանագրի նախագիծը կամ գործող պայմանագիրը պետք է պարունակի հետևյալ տեղեկատվությունը.

2.1. Ֆիլմի վերնագիրը:

2.2. Ֆիլմի պրոդյուսերների /համապրոդյուսերների/ անվանումները /անունները/ և/կամ/ իրավաբանական /փոստային/ հասցեները:

2.3. Ֆիլմի ռեժիսորների և սցենարի հեղինակների անուններն ու ազգանունները:

2.4. Ֆիլմի արտադրության ծախսերի նախահաշիվը, որտեղ նշվում են ֆինանսավորման աղբյուրները, ներառյալ՝ Կողմերի պետությունների օրենսդրության նախատեսված հարկերի մասին տեղեկությունները, ինչպես նաև պրոդյուսերներից /համապրոդյուսերներից/ յուրաքանչյուրի ներդրման տոկոսային բաշխումը:

2.5. Ֆիլմի առևտրային իրացումից ստացված եկամուտների բաշխման կարգը:

2.6. Ֆիլմի արտադրության ժամկետները:

2.7. Պայմանագրի պայմանները չկատարելու համար պրոդյուսերների /համապրոդյուսերների/ պատասխանատվությունը:

Պայմանագրում կատարվող փոփոխություններն ու լրացումները ներկայացվում են Կողմերի իրավասու մարմինների համաձայնեցմանը մինչև ֆիլմի աշխատանքային պատճենի /ֆիլմը մեկ ժամապլենի վրա ձայնագրել/ պատրաստման ժամկետի ավարտը:

3. Յուրաքանչյուր պրոդյուսերի /համապրոդյուսերի/ ներդրումը պետք է ներառի նվազագույնը ԳԱԱ-ի մեկ միավոր, գլխավոր դերակատարներից մեկին, մեկ երկրորդական դերակատար: Կողմերի իրավասու մարմինների համաձայնեցմամբ բացառիկ դեպքերում թույլատրվում է պրոդյուսերների /համապրոդյուսերների/ ներդրման ծավալի փոփոխություն:

4. Պրոդյուսերների /համապրոդյուսերների/ համապատասխան ֆինանսական ներդրումների չափաբաժինը կարող է կազմել ըստինք մինչև ութսուն տոկոս:

Բազմակողմ համատեղ արտադրության դեպքում յուրաքանչյուր պրոդյուսերի /համապրոդյուսերի/ նվազագույն չափաբաժինը կարող է կազմել առնվազն տասը տոկոս, իսկ ներդրման առավելագույն չափաբաժինը՝ ֆիլմի արտադրության ընդհանուր արժեքի յոթանասուն տոկոսից ոչ ավելի:

5. Ֆիլմերի համատեղ արտադրությունն իրականացվում է Կողմերից յուրաքանչյուրի պետության ԳԱԱ-ի կողմից:

Մյուս պետությունների ԳԱԱ ներկայացուցիչների մասնակցությունը թույլատրվում է, եթե ընդունվել է, որ դա անհրաժեշտ է ֆիլմի ստեղծման համար, համապրոդյուսերների փոխադարձ համաձայնության դեպքում:

6. Ֆիլմի արտադրությունն իրականացվում է Կողմերի պետությունների տարածքում, իսկ անհրաժեշտ դեպքերում՝ երրորդ պետությունների տարածքում՝ համաձայնեցնելով Կողմերի իրավասու մարմինների հետ:

7. Պրոդյուսերներից /համապրոդյուսերներից/ յուրաքանչյուրը ֆիլմի ելքային նյութերի /պատկերի և ձայնի/ համաձայնականատեսում է՝ անկախ նրանից, թե որտեղ են դրանք պահվում: Դրանք պահելու արտոնյալ իրավունք ունի այն Կողմը, որի պրոդյուսերները /համապրոդյուսերները/ առավելագույն ֆինանսական ներդրում են կատարել:

8. Պրոդյուսերներից /համապրոդյուսերներից/ յուրաքանչյուրն իրավունք ունի պահել ֆիլմի պատճեն՝ սեփական /եզվական տարբերակով/:

9. Պրոդյուսերների /համապրոդյուսերների/ միջև բոլոր փոխադարձ վճարումներն ավարտվում են ֆիլմի արտադրության՝ պայմանագրում նշված ժամկետի ավարտից հետո 60 օրվա ընթացքում:

10. Համատեղ արտադրության ֆիլմերին «ազգային ֆիլմ»-ի կարգավիճակ տալը փաստաթղթերով ձևակերպում են Կողմերի իրավասու մարմինները ազգային ֆիլմի վկայական հանձնելու միջոցով՝ Կողմերի պետությունների օրենսդրությանը համապատասխան:

Համաձայնագիրը Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 2012թ. ապրիլի 5-ին

Հայաստանի Հանրապետության վերապահումը

«Համատեղ ֆիլմարտադրության մասին Համաձայնագրի» 22-րդ կետի

1. Հոդված 10-ի առաջին պարբերությունն ընդունվում է առանց «Ժամանակավորապես կիրառվում է ստորագրման օրվանից» բառերի:

2. Հոդված 11-ը ընդունվում է հետևյալ խմբագրությամբ.

«Կողմերի համաձայնությամբ սույն Համաձայնագրում կարող են կատարվել փոփոխություններ և լրացումներ, որոնք ձևակերպվում են համապատասխան արձանագրությամբ, որն ուժի մեջ է մտնում սույն Համաձայնագրի ուժի մեջ մտնելու նախատեսված կարգով և հանդիսանում է նրա անբաժանելի մասը»:

Հայաստանի Հանրապետության
Վարչապետ

ՏԻԳՐԱՆ
/ստորագրություն/ ՍԱՐԳՍՅԱՆ

Քելառուսի Հանրապետության վերապահումը

Անկախ Պետությունների Համագործակցության Կառավարությունների ղեկավարների խորհրդի նիստի
օրակարգի 22-րդ կետի

Համատեղ ֆիլմարտադրության մասին Համաձայնագրի վերաբերյալ

14 նոյեմբերի 2008թ.

ք. Քիչնև

Քելառուսի Հանրապետությունը Համատեղ ֆիլմարտադրության մասին համաձայնագրի անբաժանելի մասը հանդիսացող, Համատեղ արտադրության ֆիլմերին «ազգային ֆիլմ» կարգավիճակ տալու մասին կանոնակարգի 7-րդ կետը կիրառելու է՝ հաշվի առնելով ազգային օրենսդրությունը:

Բելառուսի Հանրապետության Վարչապետ

/ստորագրություն/
Ս. Սիրիդովի

Մոլդովայի Հանրապետության վերապահումը

Համատեղ ֆինանսադրության մասին Համաձայնագրի Անկախ Պետությունների Համագործակցության
Կառավարությունների ղեկավարների խորհրդի որոշման վերաբերյալ

Մոլդովայի Հանրապետությունը մասնակցելու է Համաձայնագրի դրույթների իրականացման այն մասով,
որը չի հակասում ազգային օրենսդրության պահանջներին և տվյալ բնագավառում Մոլդովայի
Հանրապետության միջազգային պարտավորություններին:

Մոլդովայի Հանրապետության համար Համաձայնագիրն ուժի մեջ կմտնի ներպետական
ընթացակարգերի կատարումից հետո:

Մոլդովայի Հանրապետության Վարչապետ
/ստորագրություն/ Ջ. Գրեչանի